

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆԱ. ԲՍԱՀԱԿԵԱՆՆԵՆ

Զինջ, պաղպաջուն ջուրին նըման
Աղբիւրներուն հայրենական,
Երզը արտիդ — թեթել, թոյնուն —
Հասաւ ծառաւ մեր երթներուն:

Հոգիդ՝ հաղորդ ցեղիդ ցաւին՝
Հեծեց, հեւաց տառապագին.
Արտիդ երգերն ալ սիրաւոր՝
Եղան վերքեր արիւնաթոր:

Չարին՝ անգոր, Սուսին՝ անհաւատ
Լըքեցի՛ր Եկն ոստան ու դաւատ,
Ու կոյր երգչին պէս դառնաւատ՝
Սիրեցի՛ր լեռն ու անապատ:

Բայց երբ երկիրդ էր ա՛լ ազատ
Ժողովուրդովն իր հարազատ,
Երբ առաւօտն իր կը շողա՛ր
Գիւշերէն վերջ այնքան երկար,

Խորհրդային կարգին մէջ կուտ՝
Երբ կը կանգէ՛ր միակըստ՝ւր,
Խնդապատար՝ կտրտաւա՛ր
Հայրենի տուն վերադարձար:

Դարձըդ՝ բարի՛, դերըդ՝ ա՛րի,
Օրըդ՝ օրօ՛ր, արեւ քեզի,
Ու նոր երգերդ ա՛լ անհրճունջ՝
Դառնան համերգ համայնաշունջ:

Վա՛րպէս, քննարդ հնչէ՛ երկար.
Վաստակէդ վերջ՝ վարձքդ՝ կատա՛ր.
Սովետահայ Պառնասն, ահա՛,
Քեզ իրաւ պէ՛տն իր կը հանչնայ:

Ն. ԿԱՏԱՐ